



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԿՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

(ՀԻՄԱՐԱՄ)

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ

Պոլիտեխնիկական Միջվարժարանային ՕԼԻՄՊԻԱԴԱ

Նվիրված ակադեմիկոս Վ. Ս. Զաքարյանի 80-ամյա հոբելյանին

Ֆիզիկա X դասարան լուծումներ

1. Ենթադրենք հարևան էլեկտրական ժամանակ չափող սարքերի հեռավորությունը l է, առաջին ժամանակ չափող սարքի ցուցմունքը t_1 է, նախավերջինինը՝ t_2 , իսկ առաջին սարքից մինչև վերջին $N + 1$ սարքի տեղափոխման ժամանակը՝ t : Այդ դեպքում կինեմատիկական հավասարումները առաջին l հեռավորությունը անցնելուց, Nl հեռավորությունը անցնելուց և $(N - 1)l$ հեռավորությունը անցնելուց կլինեն.

$$l = \frac{at_1^2}{2}, \quad Nl = \frac{at^2}{2}, \quad (N - 1)l = \frac{a(t - t_2)^2}{2} :$$

Առաջին և երկրորդ հավասարումներից N և Nl արտահայտությունները տեղադրելուց հետո կստանանք.

$$t = \frac{t_1^2 + t_2^2}{2t_2} :$$

Տեղադրելով այս արտահայտությունը և $l = \frac{at_1^2}{2}$ արտահայտությունը

$$Nl = \frac{at^2}{2}$$

հավասարման մեջ, կստանանք

$$N = \left(\frac{t}{t_1}\right)^2 = \frac{t_1^2 + t_2^2}{(2t_1t_2)^2} :$$

Հաշվի առնելով, որ $\frac{t_1}{t_2} = n$, կստանանք.

$$N = \frac{(1 + n^2)^2}{(2n)^2}$$

$$N + 1 = \frac{(1 + n^2)^2}{(2n)^2} + 1 :$$

2. Պետք է քննարկենք խորանարդիկների սայլակով սահելու հնարավոր բոլոր տարբերակները:

Եթե երկու խորանարդիկներ սահեն, ապա սայլակի արգացումը կլինի $6gm = 0,6g = 6 \text{ m/s}^2$:

Որպեսզի երկու խորանարդիկներ չսահեն դադարի շվման դեպքում, պետք է դիտարկել ուժեր, այնպես որ շվման գործակիցը $0,5\text{-}ից$ փոքր չլինի:

Դիտարկենք այն դեպքը, երբ փոքր զանգվածով խորանարդը պետք է սահի, իսկ մեծ զանգվածով խորանարդը սայլակի հետ միասին շարժվի: Ենթադրենք շարժական ճախարակի վրա ազդող ուժը F է: Այդ դեպքում յուրաքանչյուր թելի լարման ուժը կլինի $F/2$:

Ենթադրենք մեծ զանգվածով խորանարդի և սայլակի շարժման արագացումը a է, իսկ փոքր զանգվածով խորանարդինը՝ a_1 : Այդ դեպքում, շարժման հավասարումները կունենան հետևյալ տեսքը.

$$\frac{F}{2} - \mu Mg = Ma$$

$$\frac{F}{2} + \mu Mg = 6Ma$$

Այս հավասարումների համակարգը լուծելուց հետո կստանանք.

$$a_1 = 10 \text{ m/s}^2,$$



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԿՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

(ՀԻՄԱՐԱՄ)

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ

իսկ

$$F = 2,3Mg :$$

Ճախարակի արագացումը հավասար կլինի հետևյալին

$$a_d = \frac{a_1 + a}{2} = 6 \text{ m/s}^2 :$$

3. Ենթադրենք տափողակի զանգվածը m_1 է, սկզբնական արագությունը v_0 է, իսկ սեպի զանգվածը՝ m_2 , վերջնական արագությունը՝ u : Ըստ իմպուլսի պահպանման օրենքի՝

$$m_1 v_0 = m_2 u :$$

Ըստ էներգիայի պահպանման օրենքի՝

$$\frac{m_1 v_0^2}{2} = \frac{m_2 u^2}{2}.$$

Այս երկու հավասարումներից կստանանք, որ $u = v_0$, $m_1 = m_2$: Մյուս կողմից, երբ տափողակը հասնում է h բարձրության վրա իմպուլսի և էներգիայի պահպանման օրենքները կունենան հետևյալ տեսքը.

$$m_1 v_0 = (m_1 + m_2)u_1$$

և

$$\frac{m_1 v_0^2}{2} = \frac{(m_1 + m_2)u_1^2}{2} + m_1 gh,$$

որտեղ u_1 -ը սեպի և տափողակի միասին շարժման արագությունն է, երբ տափողակը հասնում է h բարձրության: Այս հավասարումներից ստանում ենք, որ $u = 2\sqrt{gh}$:

4. Ենթադրենք սկզբնական դեֆորմացիայի մեծությունը x_0 է: Առաջին անգամ հավասարակշության վիճակով անցնելուց հետո զապանակի դեֆորմացիայի մեծության մեծագույն արժեքը նշանակենք x_1 -ով: Ենելով լրիվ մեխանիկական էներգիայի թեորեմից,

$$\frac{kx_0^2}{2} = \mu mg(x_0 + x_1) + \frac{kx_1^2}{2} :$$

Այս հավասարումից ստանում ենք

$$x_1 = x_0 - \frac{2\mu mg}{k}:$$

Այսպիսով յուրաքանչյուր անգամ հավասարակշության վիճակով անցնելուց հետո դեֆորմացիայի մեծությունը փոքրանում է $\frac{2\mu mg}{k}$ -ով: Մեր դեպքում $\frac{2\mu mg}{k} = 1$ սմ-ով: Հետևաբար մարմինը հավասարակշության վրճակով կանցնի 10 անգամ և կգտնվի դադարի վիճակում հավասարակշության վիճակից 0,3 սմ-ով դեֆորմացված վիճակում:

5. Ենթադրենք միացը իջել է x չափով, իսկ խողովակում ջրի մակարդակը նշանակենք h -ով: Միացը կգտնվի հավասարակշության մեջ, եթե $mg = \rho gh(S - S_0)$, իսկ հեղուկի ծավալի պահպանման օրենքից $hS_0 = x(S - S_0)$:

Առաջին հավասարումից կստանանք

$$h = \frac{m}{\rho(S - S_0)} :$$

Երկրորդ հավասարումից.



Polytechnic High School of Yerevan

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԿՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ (ՀԻՄԱՅՈՒԹՅՈՒՆ)

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ

$$x = \frac{m S_0}{\rho(S - S_0)^2} :$$

Էներգիայի պահպանման օրենքից կստանանք.

$$Q = mgx - \rho g S_0 \frac{h^2}{2},$$

Տեղադրելով x -ի և h -ի արտահայտությունները, կստանանք.

$$Q = \frac{m^2 g S_0}{2\rho(S - S_0)^2} :$$



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԿՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ (ՀԻՄԱԴՐԱՄ)

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ

Պոլիտեխնիկական Միջվարժարանային ՕԼԻՄՊԻԱԴԱ
Նվիրված ակադեմիկոս Վ. Ս. Ջաքարյանի 80-ամյա հոբելյանին
Ֆիզիկա XI դասարան լուծումներ

- Պետք է քննարկենք խորանարդիկների սայլակով սահելու հնարավոր բոլոր տարրերակները:
Եթե երկու խորանարդիկներ սահեն, ապա սայլակի արգացումը կլինի $6g\mu = 0,6g = 6 \text{ m/s}^2$:
Որպեսզի երկու խորանարդիկներ չսահեն դադարիշվման դեպքում, պետք է դիտարկել ուժեր, այնպես որ շփման գործակիցը $0,5\text{-ից}$ փոքր չլինի:

Դիտարկենք այն դեպքը, երբ փոքր զանգվածով խորանարդը պետք է սահի, իսկ մեծ զանգվածով խորանարդ ըսայլակի հետ միասին շարժվի: Ենթադրենք շարժական ճախարակի վրա ազդող ուժը F է:
Այդ դեպքում յուրաքանչյուր թելի լարման ուժը կլինի $F/2$:

Ենթադրենք մեծ զանգվածով խորանարդի և սայլակի շարժման արագացումը a է, իսկ փոքր զանգվածով խորանարդինը՝ a_1 : Այդ դեպքում, շարժման հավասարումները կունենան հետևյալ տեսքը.

$$\begin{aligned}\frac{F}{2} - \mu Mg &= Ma_1 \\ \frac{F}{2} + \mu Mg &= 6Ma\end{aligned}$$

Այս հավասարումների համակարգը լուծելուց հետո կստանանք.

$$a_1 = 10 \text{ m/s}^2,$$


իսկ

$$F = 2,3Mg :$$

Ճախարակի արագացումը հավասար կլինի հետևյալին

$$a_2 = \frac{a_1 + a}{2} = 6 \text{ m/s}^2 :$$

- Որոշենք մարմնի վրա սֆերիկ մակերևույթի կողմից ազդող ուժի կախումը մարմինը սֆերիկ մակերևույթի կենտրոնին միացնող շառավղի ուղղագծերի հետ կազմած α անկյունից:



$$N = 3mg \cos \alpha :$$

Դիտարկելով սեպի վրա ազդող ուժերը, կատարելով հորիզոնական հարթության վրա պրոյեկցիան, կստանանք.

$$F_{\text{un}} = N \sin \alpha = \frac{3}{2} mg \sin^2 \alpha :$$

Այս արժեքը կլինի մեծագույն, եթե $\sin^2 \alpha = 1$, որտեղից

$$F_{\text{un}}^{\text{max}} = \frac{3}{2} mg :$$



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԿՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ (ՀԻՄԱՐԱՄ)

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ

3. Որպեսզի խողովակից դանդաղորեն ջուրը հոսի, անհրաժեշտ է գազը տաքացնել դանդաղորեն, այնպես որ խողովակի ջուրը ձեռք չբերի կինետիկ էներգիա: Այդ դեպքում ազին հաղորդած ջերմաքանակը ծախսվում է գազի ներքին էներգիայի աճի և ընդարձակման ընթացքում կատարված աշխատուանքի վրա: Այսպիսով՝ $\frac{\nu_0}{S}$ բարձրությամբ հեղուկ հոսելուց հետո գազի ծավալը կիավասարվի $2\nu_0$ -ի, իսկ ճնշումը՝

$$P_1 = P_0 + \rho g \frac{V_0}{S} :$$

Ենթադենք գազի սկզբնական ջերմաստիճանը՝ T_0 , վերջնականը՝ T : Գազի համար գրելով Կլապերյոնի հավասարումը.

$$\frac{P_0 V_0}{T_0} = \frac{(P_0 + \frac{\rho g V_0}{S}) 2V_0}{T}$$

և հաշվիառնելով $P_0 V_0 = \vartheta R T_0$ հավասարումը, կստանանք.

$$T - T_0 = \frac{T_0}{P_0 V_0} \left(2P_0 V_0 + \frac{\rho g V_0^2}{S} - P_0 V_0 \right) = \frac{1}{\vartheta R} \left(P_0 V_0 + \frac{\rho g V_0^2}{S} \right) :$$

Պրոցեսի վերջում ներքին էներգիայի աճը հավասար կլինի հետևյալին.

$$\Delta U = \frac{3}{2} \vartheta R (T - T_0) = P_0 V_0 + \frac{3 \rho g V_0^2}{2 S} :$$

Որոշենք գազի կատարած աշխատանքը ընդարձակման ժամանակ: Այդ աշխատանքը ծախսվում է հեղուկի պոտենցիալ էներգիայի մեծացման և մթնոլորտային ճնշման դեմ կատարած աշխատանքի վրա: Համարելով որ խողովակի հատակը պոտենցիալ էներգիայի զրոյական մակարդակն է, այդ դեպքում սկզբում հեղուկի պետոնցիալ էներգիան կլինի

$$E_1 = \rho 2V_0 g \frac{V_0}{2S} = \rho g \frac{V_0^2}{S} :$$

Այն բանից ետո, եթե հեղուկի կեսը հոսում է խողովակից, համարելով որ այն հասնում է $\frac{V_0}{S}$ բարձրության վրա, կունենանք.

$$E_2 = \rho_0 V_0 g \frac{V_0}{2S} + \rho_0 V_0 g \frac{V_0}{S} = \frac{3}{2} \frac{\rho g V_0^2}{S} :$$

Մթնոլորտային ճնշումը հաստատուն է, հետևաբար մթնոլորտային ճնշման դեպքում կատարած աշխատանքը հավասար կլինի հետևյալին.

$$A_{\text{պ.}} = P_0 V_0 :$$

Այսպիսով գազի ընդարձակման աշխատանքը հավասար է

$$A_l = E_2 - E_1 + A_{\text{պ.}} = \frac{\rho g V_0^2}{2S} + \frac{P_0 V_0}{2} = \frac{1}{2} \left(P_0 V_0 + \frac{\rho g V_0^2}{S} \right) :$$

Ըստ ջերմադինամիկայի առաջին օրենքի՝

$$Q = \Delta U + A = \frac{3}{2} P_0 V_0 + 2 \frac{\rho g V_0^2}{S} :$$



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԿՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

(ՀԻՄԱՐԱՄ)

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ


Polytechnic High School of Yerevan

4. Q -ով նշանակենք հոսանքի աղբյուրին միացված թիթեղների լիցքը, իսկ 1 և 3-ինը՝ q -ով: Որոշենք թիթեղների միջև եղած լիցքերը արտահայտված այդ լիցքերով.

$$E_{12} = -\frac{q}{\varepsilon_0 S}, \quad E_{23} = \frac{Q-q}{\varepsilon_0 S}, \quad E_3 = \frac{Q}{\varepsilon_0 S}:$$

Հաշվի առնելով, որ 1 և 3 թիթեղների պոտենցիալները իրար հավասար են, իսկ 2 և 4 թիթեղների պոտենցիալների տարբերությունը հավասար է հոսաքի Աղբյուրի է.լ.2.ու.ին: Պարզ է, որ $E_{12} = -E_{23}$, կստանանք

$$q = \frac{Q}{2}:$$



Մյուս կողմից

$$E_{23}d + E_{34}d = \varepsilon:$$

Որտեղից կստանանք՝

$$Q = \frac{2\varepsilon\varepsilon_0 S}{3d},$$

$$q = \frac{\varepsilon\varepsilon_0 S}{3d}:$$

Երրորդ թիթեղի վրա ազդող ուժը ահավաք կլինի հետևյալին.

$$F_3 = q \left(\frac{Q}{\varepsilon_0 S} - \frac{q}{2\varepsilon_0 S} \right) = \frac{\varepsilon^2 \varepsilon_0 S}{6d^2} :$$

5. Վերևի ամպերմետրը և դիմադրատարը միացված են իրար հաջորդաբար, որոնց գուգահեռ մահցված է մեջտեղի ամպերմետրը: Ըստ խնդրի պայմանի մեջտեղի ամպերմետրի ցուցմունքը 4 անգամ մեծ է վերևի ամպերմետրով անցնող հոսանքի ուժից: Լարումների հավասարությունից կստանանք, որ ամպերմետրի r դիմադրությունը 3 անգամ փոքր է R դիմադրությունից.

$$r = \frac{R}{3} :$$

Ներքսի 3-րդ ամպերմետրով հոսանքի ուժը որոշվում է հետևյալ հավասարությունից.

$$I_3r = I_2r + (I_1 + I_2)R,$$

որտեղից

$$I = 3I_1 + 4I_2 = 19 \cdot 10^{-3} U:$$

Օգտվելով Օհմի օրենքից կստանանք.

$$I_3r + (I_1 + I_2 + I_3)R = U$$

$$R = \frac{U_0}{\frac{4}{3}I_3 + I_2 + I_1} = 148,3 \text{ (օմ)} :$$



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԿՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

(ՀԻՄԱՐԱՄ)

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ

Պոլիտեխնիկական Միջվարժարանային ՕԼԻՄՊԻԱԴԱ


Նվիրված ակադեմիկոս Վ. Ս. Չաքարյանի 80-ամյա հոբելյանին

Ֆիզիկա XII դասարան լուծումներ

- Ենթադրենք ձողը պտտվում է ազատ ծայրակետից x հեռավորության վրա գտնվող O կետի շուրջ: AO -ն կշրջվի դեպի F ուժի ազդմանը հակառակ ուղղությամբ: Նրա վրա շիման ուժը ուղղված կլինի AO միջնակետում (գուգահեռ մոդուլով իրար հավասար ուժերի գումարի համաձայն) Օ կետի նկատմամբ գրելով մոմենտների կանոնը և

$$\vec{F} + \vec{F}_{1_{2\psi}} + \vec{F}_{2_{2\psi}} = 0$$

$$\vec{F}_{1_{2\psi}} = \mu \frac{mg}{l} x$$




$$\vec{F}_{2_{2\psi}} = \mu \frac{mg}{l} (l - x)$$

պայմանից կստանանք x որոշելու հավասարումը.

$$x = l - \frac{l}{\sqrt{2}}$$

- Ուղևոքները օղակի վրայով շարժվելով, օղակի կողմից ուղևոքների վրա ազդող ուժի կախումը հորիզոնական հարթությունից ուղևոքների ունեցած բարձրությունից կախված որոշվում է հետևյալ արտահայտությամբ.



$$N = mg - \frac{3h - 5R}{R}$$

(այս արտահայտությունը կստանանք գրելով շարժման հավասարումը և էներգիայի պահպանման օրենքը) Բարձրությունը որտեղ օղակի կողմից ուղևոքի վրա ազդող

ուժը հավասար է զրոյի հետևյալն է.


$$h_0 = \frac{5}{3} R :$$

Այդ բարձրությունից հետո ուղևոքների վրա ազդող ուժը ուղղությունը փոխում է, ուղևոքների կողմից ազդող ճնշման ուժը ուղղվում է շառավղով դեպի դուրս:

$$F_D = mg \frac{5R - 3h}{R} :$$

Այն բարձրության վրա, որտեղ $F_D \cos \alpha > mg$, օղակը կպտտվի.

$$F_D \frac{h - R}{R} > Mg,$$



կամ

$$2m \frac{5R - 3h}{R} \cdot \frac{(h - R)}{R} > M :$$

Այս անհավասարությունը լուծելուց հետո կստանանք.

$$h \in \left[\frac{R}{3} \left(4 - \sqrt{1 - 1,5 \frac{M}{m}} : 4 + \sqrt{1 - 1,5 \frac{M}{m}} \right) \right] :$$



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԿՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ (ՀԻՄԱՐԱՄ)

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ

Այս բարձրությունների համար օղակը կպոկվի հորիզոնական հատակից, եթե

$$\frac{M}{m} \leq \frac{2}{3} :$$

3. Որպեսզի խողոակից դանդաղորեն ջուրը հոսի, անհրաժեշտ է գազը տաքացնել դանդաղորեն, այնպես որ խողովակի ջուրը ձեռք չբերի կինետիկ էներգիա: Այդ դեպքում գազին հաղորդած ջերմաքանակը ծախսվում է գազի ներքին էներգիայի աճի և ընդարձակման ընթացքում կատարված աշխատուանքի վրա:

Այսպիսով՝ բարձրությամբ հեղուկ հոսելուց հետո գազի ծավալը կիավասարվի $2v_0$ -ի, իսկ ճնշումը՝

$$P_1 = P_0 + \rho g \frac{V_0}{S} :$$

Ենթադրենք գազի սկզբնական ջերմաստիճանը T_0 , վերջնականը՝ T : Գազի համար գրելով Կլապերյոնի հավասարումը.

$$\frac{P_0 V_0}{T_0} = \frac{\left(P_0 + \frac{\rho g V_0}{S} \right) 2V_0}{T}$$

և հաշվառնելով $P_0 V_0 = \vartheta R T_0$ հավասարումը, կստանանք.

$$T - T_0 = \frac{T_0}{P_0 V_0} \left(2P_0 V_0 + \frac{\rho g V_0^2}{S} - P_0 V_0 \right) = \frac{1}{\vartheta R} \left(P_0 V_0 + \frac{\rho g V_0^2}{S} \right) :$$

Պրոցեսի վերջում ներքին էներգիայի աճը հավասար կլինի հետևյալին.

$$\Delta U = \frac{3}{2} \vartheta R (T - T_0) = P_0 V_0 + \frac{3 \rho g V_0^2}{2S} :$$

Որոշենք գազի կատարած աշխատանքը ընդարձակման ժամանակ: Այդ աշխատանքը ծախսվում է հեղուկի պոտենցիալ էներգիայի մեծացման և մթնոլորտային ճնշման դեմ կատարած աշխատանքի վրա: Համարելով որ խողովակի հատակը պոտենցիալ էներգիայի գրոյական մակարդակն է, այդ դեպքում սկզբում հեղուկի պետոնցիալ էներգիան կլինի

$$E_1 = \rho 2V_0 g \frac{V_0}{2S} = \rho g \frac{V_0^2}{S} :$$

Այն բանից եսո, եթե հեղուկի կեսը հոսում է խողովակից, համարելով որ այն հասնում է $\frac{V_0}{S}$ բարձրության վրա, կունենանք.

$$E_2 = \rho_0 V_0 g \frac{V_0}{2S} + \rho_0 V_0 g \frac{V_0}{S} = \frac{3}{2} \frac{\rho g V_0^2}{S} :$$

Մթնոլորտային ճնշումը հաստատուն է, հետևաբար մթնոլորտային ճնշման դեպքում կատարած աշխատանքը հավասար կլինի հետևյալին.

$$A_{\text{լր.}} = P_0 V_0 :$$

Այսպիսով գազի ընդարձակման աշխատանքը հավասար է

$$A_l = E_2 - E_1 + A_{\text{լր.}} = \frac{\rho g V_0^2}{2S} + \frac{P_0 V_0}{2} = \frac{1}{2} \left(P_0 V_0 + \frac{\rho g V_0^2}{S} \right) :$$

Ըստ ջերմադինամիկայի առաջին օրենքի՝

$$Q = \Delta U + A = \frac{3}{2} P_0 V_0 + 2 \frac{\rho g V_0^2}{S} :$$




ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԿՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ (ՀԻՄԱՅՐԱՄ)

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ

Polytechnic High School of Yerevan

4. Կոնդենսատորի շրջադիրների նշված տարբերակով լիցքավորված լինելու դեպքում, ձողի վրա ազդող ամպերի ուժը ուղղված է դեպի աջ: Հոսանք անցնելու ընթացքում կոնդենսատորի լիցքի և լարման նվազման հետևանքով հոսանքի ուժը և ամպերի ուժը փոքրանում են:
Հավասարաչափ շարժման դեպքում հոսանքի ուժը հավասար է զրոյի:
Հավասարաչափ շարժման դեպքում մակածված է.լ.շ.ուն մոդուլով հավասարվում է կոնդենսատորի շրջադիրների լարմանը:
Դիտարկենք Δt փոքր ժամանակամիջոց, որն ընտրված է այն ժամանակամիջոցից, որում դեռ արագություն չի հաստատվել:
Այդ ժամանակի ընթացքում, արագության փոփոխությունը հավասար է հետևյալին՝



$$\Delta v = a \Delta t = \frac{IBl}{m} \Delta t$$

$I \Delta t = q$ – հաղորդալարով անցնող լիցքի մեծությունն է Δt ժամանակի ընթացքում, մյուս կողմից

$$q = -\Delta q_{կոնդ}:$$

Այսպիսով՝

$$\Delta v = -\frac{Bl}{M} \Delta q_{կոնդ};$$

Գումարելով նշված տիպի հավասարումները կստանանք.

$$v_{\ell} = -\frac{Bl}{M} (C(U - Bv_l))$$

որտեղից

$$v = \frac{BlCU}{m + CB^2 l^2}$$

5. Ոսպնկակից բեկված լուսերը հայելում կստանան իրական պատկեր, եթե նրա վրա ընկնող ճառագայթները զուգահեռ են : Պատկերի հեռավորությունը գիշավոր օպտիկական առանցքից կլինի հետևյալը.

$$h = H \frac{f}{d}:$$

$$h = 2S$$

Հետևաբար

$$2S = H \frac{f}{d}$$

$$S = \frac{H f}{2 d} :$$